Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն 05

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<10>> մայիսի 2021թ. ք. Երևան

2021 թվականի մայիսի10- ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,

Ա. Կարապետյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,

Ա. Ստեփանյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար,

Ա. Թումանյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ.

Ա. Պապյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ.

Ն. Թևոսյան — Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը:
Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Բաղալյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիր(ներ)ն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 3 հայտերի քննարկում:
2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիր(ներ)ն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեցին՝

<<ՄԱՄԻԿՈՆ-ՆԱՐԵԿ>> ՍՊԸ-ի 23.04.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05417 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին, <<Ա. ՄԻՐԶՈՅԱՆ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ-ի 23.04.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05261 լիցենզիան և N 00011, N 00013, N 00014, N 00015 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին և <<ՆՈՐ ՏԱՔՍԻ>> ՍՊԸ-ի 06.05.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05295 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00028 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց <<ՄԱՄԻԿՈՆ-ՆԱՐԵԿ>> ՍՊԸ-ի 23.04.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05417 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին, <<Ա. ՄԻՐԶՈՅԱՆ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ-ի 23.04.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05261 լիցենզիան և N 00011, N 00013, N 00014, N 00015 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին և <<ՆՈՐ ՏԱՔՍԻ>> ՍՊԸ-ի 06.05.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05295 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00028 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՄԱՄԻԿՈՆ-ՆԱՐԵԿ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ
<<Ա. ՄԻՐԶՈՅԱՆ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ
<<ՆՈՐ ՏԱՔՍԻ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ համաձայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. <<ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ>> ՍՊ ընկերությանը տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝

<<ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ>> ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 20.04.2021թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 20.04.2021թ. լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին դիմում: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 22.04.2021թ. Կազմակերպությանը տեղեկացվել է փաստաթղթերում առկա թերությունների մասին: Ներկայացված չէր հայտ Ձև N 1-ը, դիմումին կից ներկայացված սարքավորումները ամբողջական չեն և չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 344-Ն որոշման հավելվածի ցանկ N 3-ով սահմանված՝ տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների ցանկին, բացակայում էր արտադրաման տարածքի հատակագիծը, առկա չէին ներկայացված սարքավորումների ստուգաչափման վկայականները, ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 690-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների փորձաքննության դրական եզրակացությունը կամ ապրանքների, առարկաների ու սարքավորումների վերաբերյալ օտարերկրյա պետությունների կամ կազմակերպությունների կողմից տրված փորձաքննության դրական եզրակացությունը ներկայացնելու պահանջին: Ի պատասխան Կազմակերպությունը 06.05.2021թ. պատասխան գրությամբ ներկայացրել էր միայն սարքավորումների ստուգաչափման վկայականները և հայտ Ձև N 1-ը: Գրությամբ նշված մյուս թերությունները Կազմակերպությունը չի վերացրել:

Հանձնաժողովի անդամ Ա. Կարապետյանը նշեց, որ ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 344-Ն որոշման հավելվածի ցանկ N 3-ով սահմանված՝ տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների ցանկով արգելակային համակարգի տեխնիկական արատորոշման ստենդը պետք է լինի հոլովակային, մինչդեռ Կամակերպության կողմից ներկայացված՝ MPP2140/2240 ստենդը հոլովակային չէ:

Հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ>> ՍՊԸ	0 կողմ, 6 դեմ

Որոշեցին՝

ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշմամբ հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 344-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին:

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերով և 5-րդ մասով ենթակա են մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
պատասխանատու քարտուղար Ա. Ստեփանյան